ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

27.12.2019թ. *Քաղաքացիական գործ*
ք. Երևան *թիվ ԵԴ/32044/02/19*

ՈՐՈՇՈՒՄ
Թիվ ԵԴ/32044/02/19 քաղաքացիական գործի
ընդդատությունը որոշելու մասին

1. Գործի դատավարական նախապատմությունը և ընդդատության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

Հրաչյա Սահակյանը 02.10.2019թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ պատասխանող Շահանե Սաֆարյանի՝ ամուսնալուծության պահանջի մասին:

Հայցադիմումում, որպես պատասխանողի հասցե, նշվել է ք. Երևան, Դավթաշեն 3 թաղամաս, 7 շենք, 17 բնակարան հասցեն:

Դատարանի **(դատավոր՝ Ս. Հովսեփյան)** 15.10.2019թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Շահանե Սաֆարյանին ք. Երևան, Դավթաշեն 3 թաղամաս, 7 շենք, 17 բնակարան հասցեով ուղարկված հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը Դատարան է վերադարձվել «չպահանջված» նշումով:

06.11.2019թ. Դատարանում ստացվել է հայցվորի և պատասխանողի ներկայացուցիչների կողմից համատեղ ստորագրված դիմումը, որով փաստաբանները հայտնել են, որ.

- իրենք 01.11.2019թ. ստացել են Դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին 15.10.2019թ. որոշումը,

- վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածը, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 16-րդ հոդվածը՝ խնդրել են քաղաքացիական գործը լուծել դիմումը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դիմումին կից ներկայացված՝ պատասխանողի ներկայացուցչին տրված լիազորագրի ուսումնասիրությանից պարզ է դարձել, որ պատասխանողի հաշվառման հասցեն Մարտունու շրջան, գ. Ղ. Ճարտարն է:

15.11.2019թ. Դատարանը որոշում է կայացրել գործը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

2. Դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել սույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ:

Նկատի ունենալով, որ նշված քաղաքացիական գործը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ, պատասխանող Շահանե Սաֆարյանի հաշվառման վայրը՝ Մարտունու շրջան, գյուղ Ղ. Ճարտար հասցեն է, և, ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, այնպես էլ ՀՀ միջազգային պայմանագրերով որևէ նորմով սահմանված չէ, որ հայցը կարող է հարուցվել պատասխանողի ներկայացուցչի հաշվառման կամ բնակության վայրի հասցեով, դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի կանոններով, գտնում է, որ գործը պետք է հանել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթից և ըստ ընդդատության ուղարկել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան»:

06.12.2019թ. թիվ ԵԴ/32044/02/19 քաղաքացիական գործը ստացվել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, նույն օրը գործը մակագրվել է դատավոր Գ. Մինասյանին, 09.12.2019թ. գործը հանձնվել է դատավորին:

16.12.2019թ. որոշմամբ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Տվյալ դեպքում սույն գործով պատասխանողի հաշվառման հասցեն է հանդիսանում Մարտունու շրջանի Ղ. Ճարտար գյուղը, որպիսի հանգամանքը դիտելով գործն ըստ էության քննելու խոչընդոտ, Դատարանը կայացրել է քաղաքացիական գործն իր վարույթից հանելու և ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշում:

Մինչդեռ ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ/32044/02/19 քաղաքացիական գործի քննությունը սույն դատարանում իրականացնել հնարավոր չէ, քանի որ ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում չի գտնվում ոչ միայն Մարտունու շրջանը, այլև Մարտունու շրջանի Ղ. Ճարտար գյուղը:

Նման պայմաններում ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն արձանագրում է, որ համաձայն չէ թիվ ԵԴ/32044/02/19 քաղաքացիական գործի տարածքային ընդդատությանը, ինչը հիմք է հանդիսանում սույն

գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին որոշում կայացնելու համար»:

Թիվ ԵԴ/32044/02/19 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 23.12.2019թ.:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Նշված իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է նաև, որ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում հայցադիմումը կարող է ներկայացվել պատասխանողի բնակության վերջին հայտնի վայրի դատարան:

Նշված ընդհանուր կանոնից բացառությունները սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածներով և վերաբերում են այլընտրանքային, պայմանագրային և բացառիկ տարածքային ընդդատությանը:

Հայցադիմումը վարույթ ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, դատարանը պետք է պարզի արդյոք ներկայացված հայցադիմումում պահպանվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված տարածքային ընդդատության կանոնները, և միայն այդպիսիք պահպանված լինելու դեպքում որոշում կայացնի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Այդուհանդերձ, եթե դատարանը գործը քննելիս պարզում է, որ այն վարույթ է ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, ապա այդ գործը պետք է հանձնի ըստ ընդդատության: Ընդ որում, նշված դեպքում գործն ընդդատությամբ հանձնելու համար բավարար չէ միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ գործը վարույթ ընդունելու փաստի առկայությունը, այլ անհրաժեշտ է նաև, որ պատասխանողը ներկայացնի իր առարկությունը՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ: Պատասխանողն իր առարկությունները կարող է ներկայացնել ոչ թե դատավարության ցանկացած փուլում, այլ՝ մինչև դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Ամփոփելով վերոգրյալը, հարկ է փաստել, որ գործն այլ դատարանի քննությանը կարող է հանձնվել ներքոշարադրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. Քաղաքացիական գործն ի սկզբանե վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ,

2. Պատասխանողը գործի տարածքային ընդդատության վերաբերյալ ներկայացրել է իր առարկությունները,

3. Առարկությունները ներկայացվել են մինչև դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Միայն նշված երեք պայմանների միաժամանակյա առկայությամբ գործն այլ դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր փաստել, որ գործն ըստ ընդդատության ուղարկած դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի գործի հետագա քննությունը:

Հիշյալ պայմաններից որևէ մեկի բացակայությունը բացառում է գործը՝ Օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքով ըստ տարածքային ընդդատության ուղարկելու իրավական հնարավորությունը:

Վերը նշված իրավակարգավորումների և դրանց համակարգային վերլուծության լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստական հանգամանքները՝ պետք է արձանագրել հետևյալը.

Դատարանի 15.10.2019թ. որոշմամբ վարույթ ընդունված հայցադիմումում՝ որպես պատասխանողի հասցե նշված է եղել ք. Երևան, Դավթաշեն 3 թաղամաս, 7 շենք, 17 բնակարանը: Ի դեպ, հարկ է նկատել, որ վերը նշված հասցեն գտնվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Պատասխանողին ուղարկված հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը Դատարան է վերադարձվել «չպահանջված» նշումով:

06.11.2019թ. Դատարանում ստացվել է հայցվորի և պատասխանողի ներկայացուցիչների կողմից համատեղ ստորագրված դիմումը, որով փաստաբանները հայտնել են, որ.

- իրենք 01.11.2019թ. ստացել են Դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին 15.10.2019թ. որոշումը,

- վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածը, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 16-րդ հոդվածը՝ խնդրել են քաղաքացիական գործը լուծել դիմումը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում:

Հարկ է նշել, որ գործում առկա չէ որևէ պատշաճ փաստաթուղթ, որը կհավաստի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին Դատարանի որոշումը պատասխանողի կողմից ստացված լինելու հանգամանքը:

Դատարանի գործն ըստ ընդդատության այլ դատարանի քննությանը հանձնելու մասին որոշմամբ արձանագրվել է, որ պատասխանողի ներկայացուցչին տրված լիազորագրում պատասխանողի հաշվառման հասցեն նշված է Մարտունու շրջան, գ. Ղ. Ճարտար:

Դատարանի կողմից սույն քաղաքացիական գործով նախնական դատական նիստ չի նշանակվել, հետևաբար, չի կայացվել նաև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում:

Մինչդեռ, Օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Այսինքն՝ Դատարանի կողմից սույն քաղաքացիական գործն ըստ տարածքային ընդդատության ուղարկվել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան առանց գործի քննությամբ վերը նշված իրավակարգավորման բովանդակությունից բխող փաստական հանգամանքների ամբողջական բացահայտման: Մասնավորապես՝ Դատարանի կողմից գործով կարող էր իրավաչափորեն քննարկման առարկա դարձվել այն այլ դատարանի քննության հանձնելու հարց այն ժամանակ, երբ մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը պատասխանողի կողմից Դատարանում կստացվեր գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ առարկություն:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու և գործն ըստ ընդդատության այլ դատարանի քննությանը հանձնելու մասին դատավարական որոշումներից բացի, այլ դատավարական գործողություններ (որոշումներ) չեն կատարվել (կայացվել), այդ թվում՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ պատասխանողի դիրքորոշման բացահայտման առումով: Ավելին՝ պատասխանողի ներկայացուցիչը Դատարանին հասցեագրված դիմումով ոչ միայն չի առարկել գործը տվյալ դատարանում քննելու կապակցությամբ, այլ այդ դիմումով ակնկալել է գործը լուծել դիմումը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում:

Հետևաբար, հարկ է նշել, որ գործն ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված լինելու հանգամանքը միայն բավարար չէ գործն ըստ ընդդատության այլ դատարանի քննությանը հանձնելու վերաբերյալ եզրահանգում կատարելու համար, այլ անհրաժեշտ է սույն որոշմամբ բացահայտված պայմանների միաժամանակյա առկայությունը:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ թիվ ԵԴ/32044/02/19 քաղաքացիական գործը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ըստ ընդդատության հանձնելու համար անհրաժեշտ փաստական և իրավական հիմքերը գործում բացակայում

են, ուստի, թիվ ԵԴ/32044/02/19 քաղաքացիական գործը պետք է հանձնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԵԴ/32044/02/19 քաղաքացիական գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

2. Սույն որոշումը և թիվ ԵԴ/32044/02/19 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3. Որոշման մեկ օրինակն ուղարկել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ